ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.03.2014թ.
213-ի 8

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ է դիմել Մեդիալաբ լրատվական-վերլուծական կայքի լրագրող Անի Եղիազարյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ մանկապարտեզ է գործում Երեւան քաղաքում,
2. Ե՞րբ եւ ի՞նչ նպատակով որոշվեց մանկապարտեզները դարձնել անվճար,
3. Որքա՞ն է մանկապարտեզ հաճախող երեխաների քանակն այսօր,
4. Որքանո՞վ է ավելացել երեխաների թիվը մանկապարտեզներն անվճար դարձնելու տարում՝ նախորդ՝ վճարովի տարվա համեմատ (խնդրում ենք նշել թվերը),
5. Քանի՞ հերթագրված երեխա կա մանկապարտեզներից յուրաքանչյուրում,
6. Ի՞նչ սկզբունքով է տրվում առաջնահերթությունը հերթագրված երեխաներին, եթե նրանց քանակը գերազանցում է պարտեզում առկա տեղերի քանակը,
7. Խնդրում ենք տրամադրել այն փաստաթղթերի (իրավական ակտերի) պատճենները, որտեղ նշված են այդ չափորոշիչները,
8. Ի՞նչպիսի լուծում է առաջարկում քաղաքապետարանը (ինչ մեխանիզմ է սահմանված) երկու աշխատող ծնող ունեցող այն երեխաներին մանկապարտզում ընդգրկելու ուղղությամբ, որոնք նախապես չեն հերթագրվել:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան